ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Տնօրենի պարտականությունները կատարող՝ ----------Ա. Գևորգյան

«----01----09----2023թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Մուշեղ Գալշոյանի անվան 148 ավագ դպրոց

ուսումնական հաստատության անվանումը

XII-6դասարան

Շառոյան Սոֆի Սամվելի

դասղեկի ազգանունը, անունը.

«2023- 2024» ուսումնական տարի

Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1.Ներածություն/դասարանի ընդհանուր բնութագիր/

Դասարանի աշակերտների թիվը կազմում է 13 աշակերտ, որից աղջիկ 5, տղա 8: Դասարանում տիրում է առողջ մթնոլորտ, բոլոր երեխաները շատ-շատ ընկերասեր են, բարեկիրթ, կազմակերպված և համախմբված: Աչքի են ընկնում առաջադիմությամբ:

2.Ուսումնադաստիրակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում- Նախատեսվում է դասարանում ձևավորել կայուն, բարի, դրական մթնոլորտ: Աշակերտների մոտ ձևավորել և զարգացնել ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողությունները, ստացած գիտելիքները նպատակային կիրառելու ունակությունները:

1.Էքսկուրսիաներ Մշակութային վայրեր/

2.Դասղեկի ժամ /յուրաքանչյուր ուրբաթ/

3.Միջոցառումներ

4.Արշավներ

5.Սպորտային միջոցառումներ

3.Հայեցի դաստիարակություն

3.1 Հոգևոր դաստրարակություն.

Կազմակերպել ուխտագնացություն որևէ սրբավայր՝ ծանոթանալու քրիստոնեական արժեքներին և Հայաստանի հոգևոր մշակույթի հետ: Կարևորելով լեզվի պատմությունը, արվեստի ավանդույթները և ազգային այլ արժեքներ:

3.2 Գեղագիտական դաստիարակություն

Իրականացնել աշխատանքներ գեղեցիկի ճիշտ գնահատման և պահպանման շուրջ: Զարգացնել գեղագիտական ճաշակը՝ կազմակերպելով այցելություններ պատկերասրահներ, զվարճանքի վայրեր, համերգներ:

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Վարել զրույցներ այս թեմայով, զինղեկի մասնակցությամբ: Ծանոթացնել հայ նշանավոր զորավարների կյանքին ու գործնեությանը, կազմակերպել այցելություն՝ Եռաբլուր:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն

Կազմակերպել սպորտ մրցումներ, սպորտլանդիա, վազքի մրցույթ, ֆուտբոլլ, շախմատի մրցում և այլն: Մշտապես հետևել աշակերտների մասնակցությանը ֆիզկուլտուրայի դասերին:

3.5 Աշխատանքային դաստիարակություն

Դասարանում սահմանել հերթապահություն և հետևել դասասենյակի մաքրությանը, մասնակցել դպրոցում կազմակերպվող շաբաթօրյակներին: Աշակերտը պետք է արժևորի և գնահատի սեփական և այլոց աշխատանքը:

3.6 Բնապահպանական դաստիարակություն

Աշակերտների մեջ սերմանել սեր դեպի բնությունը, վարել զրույցներ, այս տեմայի շուրջ, կազմակերպված մասնակցել ծառատունկին: Լինել ուշադիր և հոգ տանել իրենց շրջապատի նկատմամբ:

3.7 Դպրոց -ընտանիք կապը

Հաճախակի հանդիպել աշակերտների ծնողների հետ: Նրանց մասնակից դարձնել դասարանին հուզող ամեն մի հարցին, կազմակերպել էքսկուրսիա՝ ծնողների միջև կապն ամրապնդելու և աշակերտներին միմյանց կապելու համար:

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ԱՄԻՍՆԵՐԻ

Սեպտեմբեր

1 շաբաթ –Զրույց <<Գիտելիքի օր>> թեմայով:
2 շաբաթ – Զրույց նվիրված դպրոցի ներքին կարգապահական կանոններին և հաճախումներին:
3 շաբաթ – Զրույց նվիրված անկախության 32-ամյակին:
4 շաբաթ – Զրույց նվիրված 44 - օրյա պատերազմի հերոսներին:

Հոկտեմբեր

1 շաբաթ--- Ուսուցչի օր
2 շաբաթ--- «Թմրամոլության և ծխախոտի վնասները»
3 շաբաթ---Երեբունի-Երևան
4 շաբաթ---Աշնանային արձակուրդ՝ էքսկուրսիա

Նոյեմբեր

1շաբաթ---Հայտնի հայեր
2շաբաթ---Համաշխարհային հայտնի գրողներ՝ քննարկում
3շաբաթ---Ազգային ավանդույթներ
4շաբաթ--- Բարոյական և մարդկային վեհ արժանիքներ ու արժեքներ

Դեկտեմբեր

1 շաբաթ---Զրույց նվիրված երկրաշարժի զոհերին
2 շաբաթ--- Պատասխանատվություն և պարտականություն
3 շաբաթ--- Բնական աղետներ
4 շաբաթ--- Ամանորյա հրաշք

Հունվար

1 շաբաթ---Առաջադիմության հարցերի քննարկում և գնահատականների ամփոփում

2 շաբաթ- Հայոց եկեղեցու տոնացույցը

3 շաբաթ---Զրույց նվիրված Հայոց բանակի 32-ամյակին

Փետրվար

1շաբաթ--- Տյառնընդառաջ
2շաբաթ---Թումանյանական օրեր
3շաբաթ--- Մայրենիի օր
4շաբաթ---Դաս-զրույց <<Ես մասնիկն եմ մայր բնության>> թեմայով՝բնապահպանական դաստիարակության նպատակով

Մարտ

1շաբաթ--- Առողջ ապրելակերպ, առողջ սնունդ, առողջ սերունդ
2շաբաթ---Զրույց նվիրված մայրության և գեղեցկության տոնիին
3շաբաթ----Միջոցառում՝ նվիրված մայրերին
4շաբաթ--- Գեղագիտական և հայեցի դաստիարակության նպատակով կազմակերպել այցելություն Երևանի մշակութային օջախներ

Ապրիլ

1շաբաթ--- Հայրենասիրություն, ազգասիրություն թե՞ ազգայնամոլություն
2շաբաթ---Զրույց նվիրված ազգային արժեքներին
3շաբաթ--- Այցելություն Ծիծեռնակաբերդ և կից թանգարանը
4շաբաթ--- Պոեզիան որպես աշխարհընկալում

Մայիս

1շաբաթ---Դիտողական արշավ դեպի Գառնի
2շաբաթ--- սեմինար՝ քննադատական մտածողություն, կարողություններ և հմտություններ թեմայով
3շաբաթ---Փոխադրական քննությունների նախապատրաստում
4շաբաթ---Էքսկուրսիա բնության գրկում